ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
АЙГЕКСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

«03» 08 2012թ. N 96

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգարժան պարոն Ղահրամանյան*

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $77^{1}$-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի կողմից հուլիս ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր՝ 8 թերթ:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 6888-12
03 08 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք. Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60


# ՈՐՈՇՈՒՄ

«20» հուլիսի 2012 թվականի N 15

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՎ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ (ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ) ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի N 947-Ն որոշման, հիմք ընդունելով Այգեկ համայնքի բնակարանային հարցերով, զբաղվող հանձնաժողովի որոշումը և Հովհաննես Միրումյանի ներկայացրած դիմումը, *որոշում եմ.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշմանդամ և զոհված զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների ցուցակը՝ համաձայն հավելվածի:
2. Կարիքավոր ընտանիքի ցուցակը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը համապատասխան միջնորդություն ներկայացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2012 թվականի հուլիսի 20
գ. Այգեկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեկ գյուղական
համայնքի ղեկավարի
2012 թվականի հուլիսի «20»-ի N 15 որոշման

# Անօրեան հաշմանդամ դարձած և զոհված զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների ցուցակ

| Հաշմանդամ դարձած և զոհված զինծառայողների (ազատամարտիկների) Ա.Ա.Հ | Բնակության վայրը (մարզ, քաղաք, գյուղ) | Բնակարանն ում պետք է հատկացվի | Վիրավորվելու կամ զոհվելու տարին | Ինչ բնակարանային պայմաններում են ապրում (տեղեկություն ընտանիքի բնակարանային պայմանների մասին) | Բնակարանային պայմանների բարելավման ենթակա ընտանիքի անդամների թիվը | Հերթագրված է ընդհանուր բնակարանային հերթում թե ոչ |
|---|---|---|---|---|---|---|
| Միրումյան Հովհաննես Գրիգորի | գ. Այգեկ | Միրումյան Հովհաննես Գրիգորի | 30.04.1994թ. | ունեն բարելավման խնդիր | 4 (չորս) | ոչ |

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
հեռ. 0231-6-57-60

## ՈՐՈՇՈՒՄ

«21» հուլիսի 2012 թվականի N 16

### 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածով՝ *որոշում եմ.*

1. 2012 թվականի սեպտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ավագանու հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման նպատակով սահմանել մեկ տեղամասային կենտրոն՝ Այգեկ գյուղական համայնքի մշակույթի տան շենքում՝ 6-րդ փողոց 2 հասցեում:
2. Համայնքի ավագանու հերթական ընտրությունների նախապատրաստման հիմնական միջոցառումների պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Մայիս Աբրահամյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2012 թվականի հուլիսի 21
գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«02» հուլիսի 2012 թվականի N 5

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N1066-Ն որոշումը՝ *կարգադրում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի օգոստոսի 2-ի թիվ 14 որոշմամբ ստեղծված հանձնաժողովին՝
   Ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի հողօգտագործողների կողմից կատարված հողերի գործառնական նշանակության փոփոխությունները, արդյունքների մասին տեղեկացնել համայնքի ղեկավարին:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2012 թվականի հուլիսի 2
գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«04» հուլիսի 2012 թվականի N 6

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածով, 167-րդ հոդվածի 3-րդ մասով, 169-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով 2012 թվականի հուլիսի 3-ի համաձայնագիրը՝ *կարգադրում եմ.*

1. Աշխատանքի անհրաժեշտությունից ելնելով՝ 2012 թվականի հուլիսի 9-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավար Վարուժան Աբրահամյանին հետ կանչել ամենամյա արձակուրդից:
2. Ամենամյա արձակուրդի չօգտագործված ութ աշխատանքային օրը տեղափոխել այլ ժամանակ:
3. Համայնքի ղեկավարի տեղակալ Մայիս Աբրահամյանին ազատել համայնքի ղեկավարի լիազորությունների կատարումից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2012 թվականի հուլիսի 4

գ. Այգեկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
Էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«10» հուլիսի 2012 թվականի N 7

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար՝ *կարգադրում եմ.*

1. Խրախուսել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի աշխատողներին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2012 թվականի հուլիսի 10

գ. Այգեկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեկ գյուղական
համայնքի ղեկավարի
2012 թվականի հուլիսի «10»-ի N 7 կարգադրության

# ԽՐԱԽՈՒՍԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Աբրահամյան Մայիս - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ | - 40 000 դրամ |
| 2. | Սարգսյան Գայանե - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար | - 38 000 դրամ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«27» հուլիսի 2012 թվականի N 8

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի 1-ին մասով, 161-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N1231-Ն որոշմամբ, հիմք ընդունելով անձնական դիմումը՝ ***կարգադրում եմ.***

1. 2012 թվականի օգոստոսի 1-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (1.2-1) Գայանե Սարգսյանին տրամադրել ամենամյա արձակուրդ՝ ընդամենը 24 աշխատանքային օր (20 աշխատանքային օր նվազագույն արձակուրդ ավելացրած 4 լրացուցիչ աշխատանքային օր):

   Համարել աշխատանքի մեջ 2012 թվականի սեպտեմբերի 4-ից:
2. Աշխատակազմի քարտուղարի լիազորությունների կատարումը վերապահել աշխատակազմի առաջատար մասնագետ Սուսաննա Թորոսյանին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2012 թվականի հուլիսի 27

գ. Այգեկ